

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրություն մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Պարտադրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ.
(բացի կիրակի եւ տոն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է տաճար լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանակով տողաւորով: 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԿԵԱՐԹԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ԲԵՐԵՆԴԱՆԻՅԱՆ

Ժամանակակից միջոցները. — Երբեք Տե-
լիֆլիսի. Օպերային ներկայացումները. Նա-
մակ Բաթումի. Նամակ Դարաշիպահի. Նամակ
Խրազուրի. Ներքին լուրեր. — ԱՐՏԱԿԻՆ
ՏԵԼԻՖԻՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՄԵՐԻՆ
ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Խաղաղութիւն.

ԺԱՄԱՆԱԿԱՌ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ

Մեր մերձակոր արեւելքի առեւտրի մէջ
հայերը կատարում են միջնորդների դերը:
Նրանց միջոցով Մոսկովայի եւ Լոնդոնի գոր-
ծարանական շրջանները վաճառահանում
են իրանց ապրանքները Պարսկաստանում:
Եւրոպական Ֆիրմաները, դրամատները եւ
գիւղական մարմինները յաճախ հրաւի-
րում են հայերին, իբրեւ միջնորդ-պաշտո-
նեաներ եւ նրանց միջոցով իրագործում են
իրանց ծրագրերը Արեւելքում:

Սակայն միջնորդների այդ դերը ժա-
մանակակից ընտելութիւն ունի հայի
համար: Նա նախնական մի քայլ է բոլոր
այն ձեռնարկութիւնների համար, որոնք
ապագայում պէտք է հաստատվեն մի կող-
մից եւրոպական գործարանների, դրամա-
տների եւ գործարանների, իսկ միւս
կողմից Արեւելքի երկիրների մէջ: Այժմ
հայ հարկաւոր է, քանի որ եւրոպացի
գիւ. հաստատ ոտք չէ դրել նոր հողի վրա
եւ սերտ յարաբերութիւններ չէ ստեղծել
նոր երկրի հետ: Հայը փոքր ինչ աւելի
կուլտուրական եւ գրագետ լինելով, դարձել
է բնական միջնորդ եւրոպացու եւ ասիա-
ցու մէջ: Ներկայ հանգամանքներում իսկ
մի փոքր ժամանակից յետոյ, երբ մի կող-
մից արեւելքի փոքր ինչ աւելի կրթուեա-
նայ եւրոպական առեւտրին, իսկ միւս կող-
մից եւրոպացին աւելի կը յարմարվի ա-
սիացու ընտելութիւն եւ պահանջներին,
հայի կատարած դերը կը դառնայ բոլոր-
ովին աւելորդ եւ կը չքանայ:

Որպէս զի հայը կարող լինի իսկապէս
օգտուէտ դեր կատարել Արեւելքում, նա
պարտաւոր է հանդիսանալ իբրեւ առաջ
գնացող կուլտուրական ոյժ եւ իր գոյու-

թեամբ ու գործունէութեամբ կատարել
այն դերը, ինչ որ կատարում է եւրոպա-
ցին: Նա պէտք է նահապետական արհես-
տաւորից դառնայ առաջադէմ արհեստա-
գէտ, նա պէտք է չարչիութիւնը թողնէ
եւ կազմակերպէ կանոնաւոր եւրոպական
վաճառականութիւն. նա պէտք է կարո-
ղանայ նպատակ սեղանական արդիւնադոր-
ծութիւն գործարաններ, հող տանելով, որ
արդիւնագործութիւնը չը կեղեքվի եւ
հարստահարվի տնտեսական աննպատակ աղ-
ղեցութիւնների շնորհիւ:

Իսկ եթէ հայը ինքը չի կատարելա-
գործվի, ձեռք չի բերի կուլտուրական
նոր հմտութիւններ, շուտով նա ասպա-
րէզվիլ դէն կը շարժվի եւ իբրեւ աւելորդ
մի բան դէն կը գցվի: Այդ հանգամանքը
չը պէտք է մոռանալ:

ՆԵՐՔԻՆ ՏԵԼԻՖԻՆ

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅՆՈՒՄՆԵՐԸ

Օպերային ներկայացումը, որ տեղի ունեցաւ
երեքշաբթի, հոկտեմբերի 1-ին, մեծ հաճու-
թիւն պատճառեց հանդիսականներին:

Այդ օրը տրվում էր ֆրանսիական երաժիշտ
Դէլիբի «Ալիս» օպերան, որի մէջ առաջին
անգամ պէտք է հանդէս գար Լակմէի դերում
Թիֆլիսի հիւր եկած երգչուհի Վանդեր-Բրանդ:
Բնաւ բաւականաչափ բնորոշ կերպով ներ-
կայացնում էր Հնդկաստանի բուսականու-
թիւնը իր ճոխութեամբ, հսկայական ձիւղա-
ւորութիւններով, գոյնզգոյն արտայայտու-
թեամբ:

Երգչուհի Վանդեր-Բրանդը հենց առաջին տե-
սարաններից գրաւեց հանդիսականների ուշա-
դրութիւնը: Նա երգում է ճաշակով, իմաստով
եւ արտոյթով: Նա արտասանում է երգի բա-
ները որոշ կերպով եւ փոխում է ձայնի լու-
ւորութիւնը: Կատարողական հոգեկան լու-
սանքների եւ խոսակցութիւնների ընտելութե-
անը Նրա ձայնը փոքր ինչ ցամաք եւ սուր է
վերին նոտաներում: Իսկ միջին եւ ստորին ըն-
դիւստներում գեղեցիկ է: Հասարակութիւնը
հաւանեց առաջին գործողութեան մէջ դուէտը
եւ օրոյ գեղեցիկ կտորը, երկրորդ գործո-

ղութեան մէջ «Պարիսի աղջկայ աւանդու-
թեան» երգը, որտեղ երգչուհու ձայնը հնչում
է զուգընթաց զանազանների ձայների հետ, եւ
երրորդ գործողութեան մէջ սկզբնական եւ
վերջին երգերը:

Երգչուհին ունի գրաւիչ դէմք, որ համապա-
տասխան էր Լակմէի դերին:

Սիրող

ՆԱՄԱԿ ԲԱՔՈՒՄԻՑ

Սեպտեմբերի 27-ին

Ընտրութիւնների տարի է: Թիֆլիսի եւ
երեսանի վիճակակից է նաեւ Բաթումը: Տե-
ղիս քաղաքային վարչութիւնը օգոստոսի 10-ից
արդէն հրատարակել է ընտրողների առաջին
ցուցակը: Վերջին ցուցակը կը հրատարակվի
հոկտեմբերի 10-ին, իսկ նոյեմբերի 10-ից կը
սկսվեն ընտրութիւնները: Բացի այդ, վարչու-
թիւնը մի առանձին յայտարարութեամբ խոր-
հուրդ է տալիս եւ ցանկալի համարում, որ
եթէ ընտրողների վրա մնացած տուրք կայ,
առաջարկեալ վաղօրոք մարքելու, որպէս զի կա-
րելին չափ ստուար լինի ընտրողներին թիւը:
Ուրիշ կողմից առ այժմ այնքան խաղաղ է
անցնում ընտրութիւնների մասին հող տանե-
լու գործը, որ մինչեւ իսկ առիթ չունեցանք
մինչեւ այժմ ըրագրութեան նիւթ դարձնելու
նրան:

Պաղարկութեան գլխաւոր հիմքը կազմում է
այն, որ ըստ երեւոյթին այս անգամ ազգա-
նական խտրութիւններ չը պէտք է տեղի ու-
նայ, եթէ ի հարկէ դրան առիթ չը տան
Թիֆլիսի ընտրութիւնները:

Ուրիշ քաղաքներ ուրիշ են, բայց Բաթումը
մեծ կապ ունի Թիֆլիսի հետ, այստեղի ընտ-
րողների մեծ մասը վրացիներ լինելով, երբ
Թիֆլիսում հայերի կողմից վրացիներին բաւա-
րար ձայն չէ տրվում, այսինքն վրացիները քիչ
են ընտրում, այդ հանգամանքը առիթ է տա-
լիս այստեղեցի վրացիներին նայն ընթացքով
վերաբերվելու այստեղի հայերին: Որքան եւ
դա ցաւալի լինէր բայց եւ այնպէս իրակա-
նութիւն է: Եթէ նորից կրկնվելու լինի այդ
ձեռք, ցաւալի կը լինի մասնաւոր նրա համար,
որ մի կողմից դեռ յիշում ենք նախկին տարի-
ների նեղ կուսակցութեամբ զեկալարվելու

ձայնարիտ է: Կոմիտեական բարքերի անկման
չըլանում, որին վերաբերում են անշուշտ եւ
Պալալի տեսարանները, հին աշխարհի մի ծայ-
րից միւսն իշխում էր մի ընդհանուր եւ առա-
ջադէմ սանձարեւակութիւն բարքերի, առաջինի
եւ զգաւաւ կատարողը պատմութեան սեփական-
նութիւն էին արդէն: Երեւելքի կողմագրւումով
իր տունը լցնող հոգեւորական իր մարմնական
վայելքներից զուրա կենսի ալ նպատակ չէր
ճանաչում: Կոմիտեականը ու ծայրայեղ ան-
պարկեշտութիւնը նողկանք էին առաջ բերում
հեթանոս մտածողներին, բարոյագէտների եւ
մասնաւորապէս սոցիալիստների մէջ, բայց եւ այն-
պէս ապացուցված ձայնարկութիւն է, որ հների
հասկացողութիւնը մօրալի հարցերում միան-
գամայն տարբերվում էր մերիկից: Նրանք զգա-
ական վայելքները, մտքին ամենատեսակ պա-
հանջներին ամենալայն չափով բաւականութիւն
տալով ամենալին յանցանք, մեղք, առիթ չէին
համարում, այլ նայնքան բնական, նայնքան
հասկանալի, որքան մեր հասկացողութեամբ
ամենաանբերի, ամենաբնական պահանջները:
Քրիստոնէական մօրալը, ի հարկէ, կը դատա-
պարտէ բարոյական այսպիսի հասկացողութիւն-
ները, անբարոյական եւ պիղծ կը համարէ հին
հեթանոսներին: Բայց նրանք էլ, այդ խեղճ հե-
թանոսները, ծիծաղիկ կը թուլանային, թէ կա-
րողանային աշխարհ գալ նորէն եւ տեսնել ի-
րանց անիմոյ, բայց վայելքների այնքան սիրա-
հար գէր կուսակցութիւններ, որոնք այսօր էլ
դատապարտում են այն, ինչի համար իրանց
սրտերի խորքում մի կակծեցողիկ կարօտ
ունեն, եւ երբ խաւար օգնում է մանկայայն
չափով մղում են տալիս մարդկային բնու-

պատճառով երկար տարիներ անօգուտ եւ ա-
պարդին կորցնելը, իսկ միւս կողմից էլ տես-
նում ենք, որ վերջին տարիների համերաշխ եւ
աջող ընտրութիւնների շնորհիւ քաղաքում աւե-
լացած մի շարք շատ օգտակար գործերի պատճա-
ռով սկսել էր բուսական հաստատ հիմք դնել հա-
մերաշխ գործելու գաղափարը: Այդ տեսակէտից,
այսինքն այնքան թանգ փորձով ձեռք բերված
համերաշխութեան խախտելը բացառապէս
կախված է Թիֆլիսի ընտրութիւններից, եւ
մասնաւոր ընտրութիւններին վերաբերալ տե-
ղական լրագրութեան բռնած զրգից: Առ այժմ
ամենքն էլ լարված ուշադրութեամբ հետեւում
են միայն Թիֆլիսի ընտրութիւններին, որոնց
մասին մինչեւ այժմ ստացված տեղեկութիւն-
ները, դժբախտաբար, այնքան էլ միջնորդական
չեն մեզ համար: Սպասենք հետեւանքին:

Գ. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՉԻՉԱԳԻՑ

Սեպտեմբերի 11-ին

Դարդ ու հոգեւորով եւ ծանր վշտերով լե մի
ժողովուրդ, որը առհասարակ յատուկ է Երե-
ւանեան նահանգի լեռնոտ մասերին, ապրում
է Դարաշիպահ կողմից այս գաւառամասի ժլատ
ընտելեան ծոցում: Մի բնական զուգընթացու-
թիւն նկատելի է այդ կարծր երկրի, այդ խորտ
ու բորտ մակերեսովի ու նրա վրա ընտելող
գեղջուկի դէմքի տխուր արտայայտութեան
մէջ: Դաժան կլիմայ ունեցող այդ գաւառամա-
սը շատ աղքատ է բերքերով: Նրա վարելահո-
ղերը հազիւ ընդունակ են հացահատիկներ ար-
տադրելու: Դաւալային աշխատանքների այս առա-
մանափակ շրջանում բնականաբար գիւղացու
տնտեսութեան մէջ առանձին տեղ պիտի բեր-
նէր անասնապահութիւնը, օակայն Դարաշիպա-
հի ժողովուրդը այդ կողմից էլ դատապարտ-
ված է անյաջող պայմանների, համարեա թէ
զուրկ լինելով արտատեղեկից:

Այսպիսի անյաջող անդամանքների մէջ այդ
մասի չարքաշ կենսի սովոր ժողովուրդը մար-
դու վրա թողնում է մի խղճալի, կարեկցու-
թիւն առաջացնող տաւառութիւն: Եւ սրբաբնի
տեսարանները կարճատեւ ամառ, ձիւ ձմեռ,
ծանր աշխատանք, քիչ արդիւնք, ահա թէ ինչ
պատճառներից դաժան ընտելեան հետ կոխ-

թեան հրամայող պահանջներին եւ ապա շա-
րունակում են նոյն բարոյները: Նրանք սաս-
տիկ կամալէին տեսնելով՝ որ նոր ժամանակի
մարդիկ, քրիստոնէականներ շատ անգամ հեթա-
նոս մօրալի հետեւողներ են իրանց ներքին
կենսութեւ, բայց զրոյում առանց ամաչելու դա-
տապարտում են իրանց գաղանի գործողու-
թիւնները՝ երբ կատարողն ուրիշն է:

Հին եւ նոր աշխարհների, քրիստոնէութեան
ու հեթանոսութեան, բարոյական հասկացո-
ղութիւնների այս հիմնական տարբերութեան
մէջ որին է իրաւունքը, այդ թողնենք, որով
հետեւ իւրաքանչիւր վարդապետութիւն իր
ժամանակը՝ հետեւապէս արեւի տակ իր որդ
տեղին ու իրաւունքն ճշնի, այսքանը պարզ է
սակայն, որ դասական տարրի մարդը իր ա-
ռողջ բարոյական հասկացողութիւններով, մարդ-
կային ընտելեան իր ըմբռնումներով—եթէ առ-
տարակցիւ անհնգ մեր ժամանակակից բարոյ-
ական հասկացողութիւնները եւ ինդիւիդ նայ-
ենք զուտ օրեկիւմ տեսակէտից—ամբողջ էր,
բարոյապէս եւ ֆիզիկապէս աւելի կատարեալ
ներդաշնակութիւն էր ներկայացնում, քան մար-
մին արհամարհող մի միտակ ջրիտոնեայ, որ
բարոյապէս ապրում է հոգեբանական կենսի
համար, իսկ ֆիզիկապէս համարեա չի էլ աղ-
րում: Վերջերք, օրինակ, մի յոյն երիտասարդ-
յիւնցէք նրա դատաւարականութիւնը, այն ահա-
գին խնամքը, որով զարգանում էր նրա մար-
մին ամենայն կողմից, կրթվում էր եւ հոգին
եւ մարմինը միաժամանակ, բայց այնպէս, որ
մէկը միւսի վրա չը բռնանար: Այդպէս կրթ-
ված երիտասարդը գիւտ վազել, ցաւակի, մըր-
ցել կրկնեցողութեւ, առանց նեղվելու կրել զուրան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թռուցիկ տպաւորութիւններ)

XXXXIII

Պալալի մասին խոսելիս, եւ դիտարկել կանգ
լայն նրա շատ տները զարդարող որմնակար-
ների վրա, որոնց նմանները տեսել էի նաեւ
Եւրոպայի միւլգեում: Այդ նկարները իրանց ա-
ռանձին ընտելութեամբ՝ գլխաւորապէս էրօ-
տիկ, հետաքրքիր խորհրդածութիւնների նիւթ
են մասնակարարում եւ մեծ լոյս են սփռում
հեթանոս աշխարհի բարոյական հասկացողու-
թիւնների վրա: Բոլոր այդ նկարները համա-
րեա զգայասիրական նիւթ ունեն. ոչ մի գաշ-
տանկար, ոչ մի լեռ, անտառ, գետ, այլ մի
միայն մերկ մարմիններ՝ բարքերի տեսակէտից
ամենաաւանդելի պօզանքներով: Այցելուն պատե-
րի վրա շարունակ տեսնում է Բաթումի խելա-
գար, զգայական վայելքների մէջ, Սաւորը՝ ա-
մօթխածութիւնի եւ մօրալի ժամանակակից
պահանջներից խիստ հեռու վիճակում, Արա-
մազէն իր սիրային արկածներով, Վենուս ու
Լայօլունը պաղջնոտ ու մեղի զուարճութիւննե-
րով բռնված, Արիանը իր նազելի մերկութեամբ:
Այս պատկերները երբեմն հասնում են ան-
պիսի բացութեան, որ ոչ միայն նկարագրելը,
հապա եւ նայելն անգամ անկարելի է դառ-
նում: Կանանց ամօթխածութիւնը խնայելու
համար առաջնորդն ստիպված է լինում վար-

տուող եւ չարչարուի կեանքի ստիւոր այդ ժողովրդի ճակատին դրօշմով է մի ծանր թախիծ։ Աղքատիկ գիւղեր, լեռ լեռներէն չինձնած տնեւորով ընկճված դէմքեր մերկ անդամներով մի խօսքով չբաւորութիւն ու խեղճութիւն անհարաւիչազի ընդհանուր տպաւորութիւնը։

Դարաշրջագիւղի ժլատ բնութիւնը, կարծր ու քարքարոտ հողը ստիւգել են գիւղացուն գտնել պարագայները, աշխատանքի մի այլ աղբիւր, եւ նա աչք տալով իր դրացի մայական ժողովրդին իր եղանակով ընտելացող լայնով, իր ծանր մուրճով չահագործում էր թիֆլիս-Երեւանեան խճուղին։ Նա կամ պարագայում էր բնակարանութեամբ Երեւանի եւ Աղստօֆայի մէջ եւ կամ անգործ մուրճը առած արհամարհելով ամառայն տօթք, անձեռելի տարափել եւ ձմեռայն սառնամանիքը, անընդհատ իր երկու ոտները արանքում ջարդում էր ճանապարհի համար խիճը։ Որքան էլ դժուար են, բայց եւ այնպէս այդ երկու ծանր պարագայներէն որոշ չափով պահպանում էին նրա տնտեսութիւնը ինպատկան ջարդալուծից։

Բայց այդ էլ ձեռքից գնաց, երկաթուղին ակօսեց Արարատեան դաշտը, եկաւ խափանելու աշխատանքի այդ աղբիւրը։ Այժմ, համարեա, այդ գծով կանգ է առել երկաթուղիները, ճանապարհը դադարել է անվերջ նորոգվելուց, եւ այդ կողմերում այլ եւս չեն երեւում ոչ սայլեր, ոչ ֆուրքաններ, մի խօսքով ամեն ինչ լընել է այդ մասում, 40-ից աւելի գիւղեր մտանվել են մուսացութեան։

Ահա այս չըջանի հացաբոյսերի մասին յուշնա ամսից սկսեցին հասնել յուսահատեցնող լուրեր։ Շարժվեցին շարունակ գործում էին երաշտի սաստիկ խորակներով, դաշտերը ազանովել կպել էին գետին։ Հասկերը գլուխ չէին բարձրացնում հողի Ժողերներէն, ամեն յոյս թէ հացահատիկների եւ թէ խոտի ու դարմանի վերաբերմամբ կարել էր իսպառ։

Բայց այս անգամ, ինչպէս ասում են, բնութեան աչքը քաղցրացաւ այդ մասի վրա։ Յուշի վերջերին, երբ հասկերը լցվելու վրա էին տեղացին մի շարք անձրեւներ, որոնք չը նայած ուշ լինելուն, այնու ամենայնիւ, ունեցան հասկերի վրա փրկարար ազդեցութիւն։ Հասկերը սնունդ առան եւ լցվեցին աւելի քան սպասելի էր, իսկ ցողունները չաճեցին, ինչպէս նաեւ խոտը վնասվեց։

Այս չըջանի կալ ու կուտը վաղուց սկսվել եւ արդէն վերջանալու է, բերքը բաւարար է, տեղ-տեղ ունի միջակայք էլ լաւ, այնպէս որ մի երկու ամիս տիրող իրարանցումը չբացաւ եւ գիւղացին ապահովված է այժմ հացի կողմից։ Մնում է այժմ խոտ ու դարմանի խնդիրը։ Իսկապէս այս տարվայ խոտի ու դարմանի բերքը անբաւարար էր կենդանիներին կերակրելու համար ամբողջ ձմեռայն ընթացքում եւ իսկապէս խնդիրը լուրջ էր՝ եթէ չը լինէր նախորդ տարվայ խոտի եւ դարմանի պաշարի աւելորդը։

Չը նայած այս բոլոր անսպասելի հետեւանք-

ու տաքը, ի հարկին դիմանալ աւելի ծանր դժուարութիւններն են։ Նրա մարմինը գեղեցիկ է, բարձեւ, մասերը համապատասխան անկանոթէն զարդացած բաց օգուտ, պայծառ երկնքի տակ, լայնարձակ հրապարակներում, բնականապէս նրանում զարդացած է մարմնի եւ նրա գեղեցիկ, պլաստիկ ձեւերի կուլտը։ Եւ դրա հետ միասին նրա հոգեկան ոյժերի մշակումը, դաստիարակութիւնը յետ չէ մնացել, նրա գեղադրական ճաշակը, սէր դէպի գեղարուեստը, դէպի առհասարակ գեղեցիկը, դէպի իդէալը ծայրագոյն աստիճանի է հասել, նա աշակերտւում է Սովորաւորին, Պլատոնին, Արիստոտէլին, պատրաստ է նրանց ետեւից քաշ գալ երկրի երկրի նրանց լսելու, նրանցից սովորելու, նրանց նմանվելու համար։ Սա մի կատարելալ մարդ է եւ վայելում է կեանքը, սիրում է կեանքը իր ամբողջութեամբ, իր բնական ամբողջութեամբ, ուստի եւ իր հոգեկան ու մարմնական ոչ մի ձիւրք, ոչ մի յայդ նրան խոտելի չէ։ Նա վայելում է եւ ըմբռնում է կեանքը նրա ամենալայն հասկացողութեամբ, որովհետեւ նրանից դուրս ոչինչ չէ ճանաչում, ոչինչ չէ սպասում, նրա փոյթը չէ, թէ հանդերձ աշխարհն ինչ է պահում նրա համար, դժոխք, թէ աղբայութիւն, ամենայն, թէ անվախճան երանութիւն, այդ բոլորը նա վերջացնում է այդ աշխարհում եւ կնքում է իր փառաւոր ու լայն գոյութիւնը։

Այսպէս է հին հեթանոս աշխարհը։

Քրիստոնէութիւնը եկաւ, բարոյական հին հասկացողութիւնները գլխի վայր դարձրեց, որովհետեւ հին աշխարհի անկման չըջանում

ներին՝ Դարաշրջագիւղ—այս լեռնաւոր ու ժլատ դաստաւար տնտեսական դրութիւնը մտահոգութիւն է պատճառում մանաւանդ ներկայիս լին գալուց յետոյ։ Եթէ նրա տնտեսականի եւ պարագայներէն մէջ համապատասխան ժամանակակից պահանջների փոփոխութիւն չը մտցնվի, շատ ծանր կը լինի այդ ժողովրդի դրութիւնը։

Ա.—Դ.

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԳՐՈՒԹԵԱՆ

Բազու, սեպտեմբերի 24-ին

Խնդրում եմ մի փոքրիկ անկիւն նորհել ինձ «Մշակի» մէջ ներկայիս պատահանելու այն հարցին, որ ի շարք լուրերի կարգացի։

Բազուի թատրոնական վարչութիւնը մի նամակով դիմել էր ինձ մարտ ամսին, եւ խնդրել էր որոշ գիշերով համաձայնութիւն ներկայ ձմեռային գործունէութեան չըջանի մասնակցելու եւ հեռագրով յայտնելու իմ պատասխանը։

Ի նկատի ունենալով թատրոնական ֆոնդի անհաւանական փնտրել, ինքս ինձ պարտաւոր համարեցի, առանց որեւէ առարկութեան, համաձայնվել եւ հեռագրել Նոր-Նայիջեւանից, որ գտնվում էի։

Մայիս ամսին վերադառնալով Բազու, թատրոնի ղեկավարներից երկուսի հետ սկսեցի բանակցել պայմանագրի մի քանի յօդուածների փոփոխութեան մասին, թէ անձամբ եւ թէ գրաւոր։ Մինչեւ իմ վերջնական կերպով համաձայնվել, խմբի մնացեալ անդամներն մերժում էին պայմանագրի եւ կանխավճարներ տալ, առարկելով, թէ նախ պէտք է տ. Սիրա-նոյի հետ պայմանագրվել, որից կախում է խմբի գոյութիւնն ունենալը կամ ունենալը։

Մի երեկոյ, խմբի անդամները ինձ մօտ գալով, յայտնեցին իրանց արտուճելու եւ անկանքի վիճակը, խնդրելով ժամ առաջ վերջացնել իմ պայմանը։ Այդ լսելուց յետոյ, ինձ եւ ղեկավարների միջոցով գործունէութիւնը համար, հէնց նոյն գիշերը ինքս անձամբ գնալով գործունէութիւն, տուի իմ վերջնական համաձայնութիւնը, որից յետոյ մնացել էր միայն պայմանագրի արտագրութիւնը եւ իմ ստորագրելը։

Մերկորդ առաւօտը խմբի բոլոր անդամները, իմ համաձայնութեան հիման վրա, պայմանագրվեցին, առանց կանխավճարների եւ ճանապարհվեցին դէպի Շուշի։

Ինքս երկու օր ապաստելուց յետոյ պայմանագրի ինձ վերադարձնելուն, որպէս զի ստորագրեալ այլ եւս չունենալով միջոց սպասելու, եւ նոյնպէս ճանապարհվեցի Շուշի, համազօր լինելով, որ մեր մէջ վերջացած է եւ խօսքը աւելի բարձր է, քան ստորագրութիւնը։ Սա-կայն օգոստոսի 28-ին վերադառնալով Բազու, յանկարծ տեսայ, որ բառեր փոփոխել են իրանց տեղերը, խօսքը անցել է ստորագրութեան տեղը, ստորագրութիւնը անցել է խօսքի տեղը... Այս յեղաշրջումը թէպէս ինձ զարմացրեց, բայց օրինաւոր էր (?)... եւ ըստ օրինի եւ անհրաժեշտ էի... քանի որ ինձ գրած էր հետեւեալ բառերը. «Անկեւ եւ, որ պայմանագիր չը ստորագրած» մենք բնաւ չէինք կտրող համարել, թէ արդէն վերջնականապէս կապված ենք ձեզ հետ... Եւ այս խօսքերը այն պարտններն են ասում, որոնց մի փոքրիկ նամա-

բարքերի սանձարձակութիւնը ծայրայնորէ-թեան էր հասցրած. նոր վարդապետութիւնը իրերի բնական, արտաբանական ընթացքով հանդիսացաւ բռն ու հակահարուած տիրապետող գաղափարների դէմ եւ ընկաւ նոր ծայրայնութեան մէջ։ Նա մարմնադրած անցաւ վայրէջքները հոգեկան մահացու մեղք եւ ս. Գրքի շատ անգամ անպարկեշտ պատմութիւնները, անկանքից զգալի ընդունի զգալի կանխ-կանքներ ներկայացնող տեսարանները բացառեց այլաբանորէն։ Աշխարհային վայելքների տեղ նա խոտացաւ յաւիտենական երանութիւն, մարմինը իր դարաւոր իշխանութիւնից զանկէծ ընկաւ անհանգիստ ու մոռալ հոգու ոտների տակ եւ շտապեց ամօքիլ թանձր ջուղով մեծքի պատանով ծածկել իր մեղքութիւնը, երկնային երեւակայական գեղեցկութիւնը բռնեց իրականի, առարկայականի տեղ։ Մարդկութիւնը, մտալ ու տխուր, դադարեց ժպտալ, գլուխը քաշ գցեց, ճակատը կնճեց եւ սկսեց կռւողը ծնել իր գործում եւ չը գործած յանցանքների համար։ Ի՞նչ օր ս. Գրքին առում էր, որ նա զեռ չը ծնալու մեղաւոր էր, որովհետեւ մեղքով է յղացվել Միջին դարերն իրանց միատիգիւղով, վանքերի խաւարում հիւժված ուղեղներն իւրանց կրօնական առաւելներով ու հիւանդոտ զառանցանքներով կապարի պէս իշան հեթանոս մտքի վերջին շուրթերի վրա եւ մարդկութիւնը ինչպէս հաղթչնոյ մի հիւանդ մարմին կրօնական ջղաճգութիւններով ցնցվեց, սողաց ամբողջ դարեր մինչեւ վրա հասաւ վերածնութիւնը։

Ուշադրութեան արժանի մի հանգամանք է,

կին հաւատալով, եւ անցել եւ Գնաւոր եւ եւկել եւ հազարաւոր վերադարձից առանց պայմանագրի ունենալու։ Յիշուլ բառերը լսելուց յետոյ ինձ օրիշ ոչինչ չէր մնում անել, բայց եթէ լսեի։ Միայն դուք պաշտպանվելու համար այն զրպարտութիւնից, որ իբր թէ ինքս չեմ կամեցել ստորագրել պայմանը, բացատրութիւն պահանջեցի եւ փաստերով ապացուցեցի, որ ոչ թէ եւ չեմ ստորագրել, այլ գործը կատարող որոշ անձնաւորութիւն, որոշ նպատակի համար միայն, չարաբանակի պայմանագիրը ինձ չէր վերադարձրել, որ ստորագրելու չախտաւորութիւնը ունենայի։

Այսպիսի միջոցներ գործադրելուց յետոյ, ինձ առաջարկվեց խմբում ընդունվել կէս առնիկով եւ կէս բէնէֆիտով. կամ առանց բէնէֆիտի, ամիսը երեք անգամ պարտաւորեցողի մասնակցութիւնս, մուտքը 75 ր.

Թողութիւն խնդրեցի մտածելու այս մասին... բայց շատ մտածելով տեսայ, որ իմ բեմական եւ արտաքին ծախսերն չը պիտի բաւէր այդ 225 ռուբլին, որ առաջարկում էին ինձ, ուստի յայտնելով ցաւակցութիւնս, մերժեցի։

Ութ օրից յետոյ ստացայ կրկին հրաւեր. 300 ռ. առնիկ եւ մէկ բէնէֆիտ։ Այս արդէն չափազանց էր... այնքան վերադարձեց յետոյ, որ արդէն կրել էի, ծանր էր ինձ տանել նաեւ սակարկութիւնների անախորժ տեսարանը... Եւ ասացի. խնդրում եմ ինձ ազատել եւ չը խօսել այլ եւս մասնակցութեան մասին. եւ չեմ կարող ընդունել ուրիշ պայմաններ, քանի որ եւ ունեցել եմ որոշ գիշերով պայման եւ այդ հիման վրա եւ համարել եմ ինձ խմբի անդամ։ Եթէ ձեռ նախկին առաջարկած գիշերով իմ տուած համաձայնութիւնը ձեզ ձեռնուտու չէր՝ դարձեալ ինձ պէտք է յայտնէի, զուցէ այն ժամանակ կարելի էր կրկին որեւէ զիջում անել. բայց այսպիսի վերադարձից յետոյ, եւ ինքս ինձ պարտաւորված եմ համարում կամ ստորագրել այն պայմանը, որ երկուստեք համաձայնվել ենք, եւ կամ այլ եւս չը խօսել այս մասին։

Այս է եղելութեան բուն պատճառը, որը մանրամասնօրէն յայտնելու ստիպված լինելուս համար անչափ ցաւում եմ։

Սիրանոյ

ՆԵՐՔԻՆ ԿՈՒՐԻՅԻ

Մեզ հաղորդում են, որ Անդրկովկասի նահանգական քաղաքներում պատգամութիւններ են տեսնվում կազմակերպելու այնպիսի կոմիտեաներ, որպիսի հաստատված է Թիֆլիսում, ջննելու տեղական գիւղատնտեսական կարիքները։

Մեզ հաղորդում են, որ Կովկասի եւ Ռուսաստանի ներքին նահանգների մի քանի քաղաքների վարչութիւններ շատ հետաքրքրված են այն աղող փորներով, որ արաւ Թիֆլիսը, բաւալով մօի խաւսութիւնը, եւ դիտաւորութիւն ունեն նոյն փորը անել իրանց մօտ։

Ինչպէս երեւում է՝ օտարադաւանների համար հոգեհանգիստ կատարելու խնդիրը անորոշ է մնացել նաեւ այլ քրիստոնէական եկեղեցիների մէջ։ Ռուսաց «Гражданинъ» թերթը, առաջ

որ վերածնութեան ամենափայլուն շրջանում, երբ դասական միտքը, դասական գեղարուեստը, փիլիսոփայութիւնը եկան ջանդուլ միջնադարեան խաւար հասկացողութիւնների մղած բորբոսնած շէնքը, կեանքը՝ քրիստոնէական ծիրանին վրան պահելով հանդերձ, հեթանոս ոգի եւ ձգտումներ ունէր Մարմնի կուլտը, գեղեցիկը նորէն սրբազորովեց, այդ դարի մեծ վարպետների մի-մի կատարելալ հեթանոսներն են հանդիսանում իրանց ընտրած սիւժետներով, իրանց բարոյական փիլիսոփայութեամբ, որ առանց քաջվելու արտայայտեցին ամենաազդու չնչնով այնքան գլուխ գործոցների մէջ։

Բարոյական հասկացողութիւններն անշուշտ յարաբերական են իւրաքանչիւր ժամանակի ինչպէս եւ ժողովրդի համար։ Ամեն մի դար գալիս է իր բաժինը բերելու հին վրա կամ իսկապէս կերպարանափոխելու. այն Մինչեւ այժմ մարդկութեան մեծագոյն խելքերը ջանքեր են արել՝ տալ աշխարհին այնպիսի բարոյական օրէնքներ, որոնք ըզլխելով բնական օրէնքներից՝ անպայման պարտադիր լինէին բոլոր ժողովուրդների եւ բոլոր ժամանակների համար, այդ ջանքերը անդնդ են բազմաթիւ փիլիսոփայական սիստեմներ առանց պատկերելու կատարելալ յաջողութեամբ։ Մօրայի այդ անընդհատ էջօլիւզիայի մէջ հիմնաւորը եւ աւելի յարատեւողը այն բարոյական գաղափարներն են եղել միշտ, որոնք չափից դուրս կոշտութեամբ չեն լսեցալութիւնը, չեն պայմանաւորվել մարդկային բնութիւնը, որոնք սուր հակասութեան մէջ չեն դրել հոգին ու մարմինը, որոնք այնպէս սերտ չաղկալված են, որ մէկը թերութիւնը ճակատա-

բերելով այն հանգամանքը, որ նորեւս վերհանում վախճանված Գուրչին զօրապետի համար հոգեհանգիստ կատարելը մերժել է տեղական օրթօքոս բահանան, ի նկատի ունենալով, որ հանգուցեալը կաթօիկ էր։ Եւ այնպէս եւ այն կարծիքը, որ այդպիսի մերժումը հակառակ է ոռոսաց եկեղեցու ոգուն։ Այդ տեսակ արգելք՝ աղօթել ոռոսաց եկեղեցում ծարի, Թագաւորի քաջ սպասաւորի համար, որովհետեւ նա կաթօիկ էր, կը մտցնէ երկրի եւ զօրքի կեանքի մէջ անցանկալի քաղաքական տարր եւ, հրապարակաբար վիրաւորելով մի եկեղեցի, կը հեռացնէ վառանջելով ոռոսներին իրանց եկեղեցուց։ Միթէ նա աւելի արժանաւոր կը լինէր օրթօքոս եկեղեցու աղօթքներին, եթէ նա այդ աղօթքները եւ իր կարիէրը գնէր իր հաւատի ուրացմամբ, որի մէջ մկրտվել էր։

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան տոաջիկայ նիստերից մէկը նուիրված կը լինի այն հարցին, թէ ինչ ձեւով կարելի է կազմակերպել գործակալութիւններ բոյսերի սերմացուներ, գիւղատնտեսական գործիքներ եւ ամեն տեսակ դիւրութիւններ հայթայթելու մեր երկրի գիւղատնտեսներին ձեռնուտ պայմաններով։

Երեքշաբթի, հոկտեմբերի 1-ին, ոռոսաց զբաւառական արտիստների խումբը ներկայացրեց «Պալկոման դաստիարակը» վերնագրով կոմիդիան, թարգմանութիւն գերմաներէնից։ Կոմիդիայի մէջ դուրս է բերված վատ եւ անբարոյական դաստիարակների ու պետանդ մանկավարժների տիպը։ Սորհուրդ կը տայնք հայ դրամատիկական ընկերութեան վարչութեան թարգմանել տալ այդ պիէսան եւ ներկայացնել, ի նկատի ունենալով նրա կրթիչ նշանակութիւնը։

Մեզ հաղորդում են, որ այս տարի աշուն ցարտ է անցնում Անդրկովկասի համարեա բոլոր մասերում, սակայն անձրեւներ զեռ չը կան մեծ քանակութեամբ։

ԲԱՌՈՒՄԻՑ մեզ գրում են սեպտեմբերի 30-ից. «Այս օրպէս քաղաքային դուռայի նիստում (երեկոյան ժամը 9 1/2-ին), ուր բացի ձայնաւորներից ներկայ էր նաեւ կողմնակի մեծ բազմութիւն, արտի պայթելուց յանկարծամահ եղաւ ձայնաւոր Լեւոն Մճեղովը։ Հանգուցեալը պարտկանում էր այն տեսակ ձայնաւորների չարքին, որոնք լայրված ուշադրութեամբ անընդհատ հետեւում են ընթացիկ գործերին եւ միշտ պաշտպանում քաղաքի շահերը։ Դէպքը տեղի ունեցաւ այսպէս։ Փնջվում էր ուղարկվալի հաշապահին թոշակ տալու հարցը, հաշապահը ինքնակամ կերպով հեռացել է ուղարկվալի եւ օտացել է լեւոնով զառնակերպութեան Բաթումի ազնուոր պալատը։ Այդ հարցի առիթով հաղի. էր սկսվել հակաձայնութիւն, երբ Մճեղովը յանկարծ ուշաթափ

գրապէս անդրադառնում է միւսի վրա իր բոլոր ցաւալի հետեւանքներով, ապացոյց միջնադարեան կիսախելագար, դիւաւար կրօնական միաբանութիւնները, խաչակրաց արշաւանքները կազմակերպող գալիւցինացիայով բռնված խաչնիճաղանձ ամբողջ, կրօնական հայաւանքների հիւանդոտ հեղինակները եւ նրանց թափել տուած այնքան անօգուտ արիւնն ու արցունքը։ Գրիստոնէութեան Բաթումի ազնուոր պալատում միշտ ամենաարտասուելի հետեւանքներ է ունեցել ընտանեկան եւ հասարակական կեանքում, անհատական եւ ազգայնական յարաբերութիւններ չըջանում։ Ուշադրութեամբ դիտելով ժամանակակից կեանքը, ժամանակակից քաղաքակրթութիւնը, որի մէջ այնքան խոշոր բաժին ունի վերածնութիւնը՝ մարդը նկատում է, որ հեթանոս միտքը բարոյական հասկացողութիւնների որոշ շրջանում իրապէս իշխող է դեռ։ Նոյնիսկ մարմնի կրթութիւնը, նրա ֆիզիկական դաստիարակութիւնը, որ այնպէս յատուկ էր հին յոյնին՝ այսօր շատ քաղաքակրթի հասարակութիւնների համար կենսական պահանջ է նկատվում։ Այսպէս, ինչ որ անում էր հին յոյն ու հռոմէացին, մեր ժամանակներում տարբեր եղանակով, տարբեր պայմաններում եւ տարբեր հասկացողութեամբ կատարում է անգլիացի երիտասարդը, այդ առողջ կենսական սերունդը, որի կամքի հաստատութիւնը, քաղաքացիական առաքնութիւնները, անհատական ձեռնբեցութեան յանդուգն ոգին կարող են օրինակ ծառայել գուցէ շատ ազգերի երիտասարդներին։

Ա. Աւարտեան

եղաւ թէ բաղադրուելը, թէ ձայնաւորները եւ բոլորները մտնեցան ու երեսին ջուր արակե-
լով ձեռքերի վրա տարան դահլիճին կից սե-
նակը: Մի րոպէ չանցած՝ քաղաքացուի իշխ.
Անդրոնիկովը դուրս եկաւ սենակից եւ յայտ-
նեց, որ նիստը փակվում է: Մենքովը արդէն
հոգին աւանդել էր: Անպիտան ընդունելով
սկսեց իրար անցնել եւ ապա տխուր տպաւո-
րութեան տակ մաս-մաս հեռանալ դուռնայից:

ԱՄԵՐԻԿԱՆԻՐՈՂՈՒՄ մեզ գրում են. «Այս
օրերս վախճանվեց տեղիս հարուստներից մէկը,
Մարտին Գլադսթոնը: Նախնական հասակի
որդերը, իրանց հօր յիշատակը յաւերճեցնելու
համար, նախնական քաղաքացին հիւանդանոցին
1,500 րուբլի, այն պայմանով, որ ի հաշիւ այս
մայր գումարի տոկոսները, հիւանդանոցում,
արդէն սահմանված տասն մահճակալների թի-
վի, աւելացնելու եւ մշտապէս պահել 11-րորդը,
յանտն հանգուցեայի: Բացի սրանից խոստա-
ցան որդեգրել մի անտէր երեխայի, տալով նը-
րան հնարաւորութիւն սովորելու տարրական
ուսումնարանից մինչեւ բարձրագոյնը: Քաղա-
քացին վարչութիւնը իր ձայնաւորներով ի նշան
երախտագիտութեան ներկայ էր հանգուցեայի
յուզարկաւորութեան, որ մի առանձին չե-
զութեամբ տեղի ունեցաւ սեպտեմբերի 28-ին:
Այս տեսակ նախորդներով ինքնաբեր, մեր կար-
ծիքով, շատ եւ շատ օրինակելի պէտք է հա-
մարեն, մանաւանդ Ալեքսանդր Գրիգորի պէս մի
քաղաքացու»:

ԱՍԽԱՐՀԻՅԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի
22-ին, եկեղեցու բակում հրաւիրված ժողո-
վականները, Ազգայնական հոգաբարձութեան
գործերը վարելու համար ընտրեցին մի վար-
չութիւն՝ հինգ հոգուց բաղկացած: Ընտրվե-
ցան պ. Կ. Տէր-Վարապետեանց, Բ. Տէր-
Բաղդասարեանց, Լ. Ղալաթեանց, Յ. Ղազեանց
եւ Դ. Մաղաւորեանց: Վարչութիւնը իր ա-
ռաջին ժողովում ընտրել է նախագահ՝ Ն. Տէր-
Վարապետեանցին, գանձապահ՝ Լ. Ղալաթեա-
նին: Ծանկանալով, որ նորընտիր վարչիւնը ա-
ւելի եւանդով կատարեն իրանց պարտքը՝ բան
կատարել են իրանց նախորդները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

— Բոլորական լրագրիները լի են ոգեւոր-
ված յօդուածներով կոմս Իգնատիւի հասցէին
իրեն Ամն-Ստեփանովի Բոլորականի ստեղծո-
ղին: Միայն իր քովից կոմսի մաստրոն
մեծ ծառայութիւնները բոլորական դասին,
լրագրիները յայտնում են, որ կոմսը վայելում
է ամբողջ բոլորական քաղաքացու, առանց
կուսակցութիւնների եւ համագործակցութեան
թուղթի, եւ իրեն ապագայից բերում են այն
իրողութիւնը, որ նոյն-իսկ Ստամբուլում
Թուրքիայի աշխարհային թշնամին, միշտ
յարգանքով էր վերաբերվում կոմսին եւ մի
անգամ նոյն-իսկ զինքն նրա օգնութեան եւ
աջակցութեան:

— «St. James Gazette»-ն հաղորդում է, որ
ռուսաց զինպետ Կ. Պոլոնով պահանջեց Բ.
Իոնին անմիջապէս ետանդուն միջոցներ ձեռք
առնել իրականացնելու համար խաղաղութիւնը
Թուրքիայում: Ռուսաց զինպետի պահանջը
կրկնեց Ֆրանսիային:

— Բայազետից մայրաքաղաքի լրագրիներին
հաղորդում են, որ Թիւրքաց գործերը վերսկը-
սեցին իրանց անկարգութիւնները պարսկական
աւանգիւնի վրա: Դեռ անցեալ աշնանը մի քանի
ընդհանրումներ տեղի ունեցան աւաշուխան
խանութի, Թիւրքաց գործերի եւ ժողովրդի մի-
ջեւ երկու կողմից եւս սպանվածներ կային:
Վերջապէս հանգստութիւն տրեցին Ներկայումս
ձեռք-փոխալի եղբայրը կրկին շարունակում է
իր բռնութիւնները: Նա արդէն հրամայեց մա-
քել Բայազետ գիւղը պարսկական սահմանի վրա
եւ այնտեղ հաւաքել Թիւրքաց գործերը: Պարս-
կական խանութը անկարող են զիստադրել նրանց,
իսկ կառավարութիւնը ամենեւին չէ կարողա-
նում կարգի բերել սահմանագծային խնձով
հարցերը: Դրանով նա խախտեաւ իր Թիւր-
քերին առաջ շարժվել եւ նորանոր բռնութիւն-
ներ կատարել: Բայազետում պարսկական հիւ-
սատուներ չը գիտէին այնքան, որ ոչ ոք ոչ աղքատ-
ութիւն չէ դարձնում նրա բողոքողների եւ գան-
գանների վրա:

— Բայազետից հաղորդում են, որ քաղաքում
եւ նրա շրջանում ապրող զբոսը ցեղերը—չա-
լովները եւ հայաբնակները—կապակցութեան
ցին, իրանց ցեղապետների ղեկավարութեամբ,
աւաղակալութեան, որոնք աւերում են ռուսա-
կան եւ պարսկական սահմանները եւ վերա-
դառնում են տուն հարուստ աւարով: Շրջանի
բոլոր հայկական գիւղերը լցվեցին Թիւրք զին-
ւորներով, որոնք խլում են աղջիկներին եւ
կանանց իրանց ծնողների եւ ամուսնիների
ձեռքից եւ մահմեդականացնում են:

ՄԵՄԵՐ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԵՍՊԱԲԼԻԿԱՆԻՅԵՐԻ

30 սեպտեմբերի

ԲԵՆԱՋԱՆ. «Губернск. Вѣдомости» լրագրում
հրատարակված է Բարձրագոյն բարեհաճութիւն
գեներալ-ադիւտանտ Վանսովսկուն Բաղա-
քացի պատուաւոր քաղաքացու կողմէ յայտ-
նագրեցու առիթով:

Կ. ՊՈԼԻՍ. Բ. Դուռը գիմեց պետութիւննե-
րին շրջաբերական յայտագրով, որի մէջ գան-
գաւովում է սահմանի անբաժանելի պատկանու-
թեան վրա բոլորական իշխանութիւնների
կողմից եւ այն բանի վրա, որ Բիւլեան վանքի
մօտ գործարարների հրամանատարութիւնը
յանձնվում էր այնպիսի օֆիցերներին, որոնք
անցնում էին աւագակալների կողմը:

Կ. ՊՈԼԻՍ. Խէղիվ ճանապարհ ընկաւ Եգիպ-
տոս:

Լուր է պատուում, որ բոլորական մեծ ա-
ւագակալների եւ Թիւրքաց գործերի միջեւ Պէտ-
րիչի մօտ, Սէրէսից դէպի հիւսիս, տեղի ու-
նեցաւ ընդհարում: Զինու տեղեկութիւններ
չը կան: Առում են, որ բոլորական աւագա-
կալութեան կողմից 170 հոգի սպանվածներ,
վիրաւորվածներ եւ գերիներ: Թիւրքերը նոյն-
պէս կորուստներ ունեցան: Երէկ Սալոնիկից
երկաթուղիով փոխադրվեցին Դէմիր-Հիսար
երկու բաւալիս զորքեր, որոնք արշաւեցին
հիւսիսային ուղղութեամբ: Զուտայի մօտ տե-
ղի ունեցած ընդհարման երբ մասին մանրա-
մասնութիւններ չը կան:

Վիէննա Ցեպտեմբերի ժամանեց Մեծ Իշխա-
նուհի Միլիցա Նիկոլայեւիչա Ռուսաստան գնա-
լու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Սեպտեմբերի 29-ին հելլէ-
ների Թագուհի Օլգա Կոստանտինովնա Օգոս-
տափառ որդու՝ արքայորդի Նիքոլայի հետ
ճանապարհ ընկաւ Սեպտեմբերի վայրով Յու-
նաստան:

1 հոկտեմբերի
ԺԼՆԵՎ. Ամեն տեղ վերսկսվեցին աշխա-
տանքները:

ՊԱՐԻԶ. Գործադուներին չը մասնակցող
բանւորներին գէշերը բաժանելու լուրը ան-
հիմն է: Սեպտեմբերի 30-ին Բարդուի չիւտ
օդապարիկով աղոյ կերպով վերելք կատարվեց,
բայց բարձրութեան վրա կտրվեցին նաւակի
թուկերը: Բարդուի եւ ուղիկեցը մեռած գտն-
վեցին:

Նիւ-ԵՐՍԿ. Քարածուխի կարիք է գգաց-
վում. շատ քաղաքներում ամուլը էժանացրած
գներով է ծախվում աղքատներին:

ՇԱՐԼՈՒԱ. Բէլգիական մի քանի ածխահան-
քներում գործադուներ սկսվեցին՝ ամուլը դէպի
Ֆրանսիա արտահանելը արգելելու նպատակով:

ՊԱՐԻՍ. Նախկին մինիստր Լիւցաւի ճառ
արտասանեց եւրոպական կոնգրէս գումարելու
մասին, որը կարողանար վերադառնել մաքսային
հարցերը, որոնք անջատում են պետութիւննե-
րին միմեանցից, եւ ընտելեան ենթակից այն
վտանգները, որոնք կապված են տրեստների
հետ, եւ առաջարկեց, որպէսզի Իտալիան այդ
գործի նախաձեռնութիւնը յանձն առնէ:

ՕՐԵՈՒ. Սեպտեմբերի 30-ին, զինքնաշար տա-
երկուսերորդ ժամին, Բիգա-Օրգովան երկա-
թուղու Կարաշիվ կայարանի վրա, ապրանքա-
տար գնացքը ընդհարվեց չողակառքին: Մի քանի
վագոններ ջարդվեցին: Կինք մարդիկ վիրաւոր-
վեցին:

Կ. ՊՈԼԻՍ. Հինգշաբթի եւ ուրբաթ Սալոնի-
կից եւ ուրիշ կէտերից երկաթուղով ուղարկ-
վեցին Դէմիր-Հիսար էլի 2000 Թիւրքական
զորքեր, որոնք գնացին դէպի բոլորական
օսահմանը բերդապահ զորքերը ուժեղացնելու
համար: Կենտրոնական կոմիտէի հրամանով
Սօֆիայում հրամանագրվում է դադարեցնել
աւագակալների գործունէութիւնը մինչեւ
գաղութները, Հրամանը չի տարածվել ամեն տեղ,
եւ աւագակալների գործունէութիւնը հաղի-
թ է դադարի:

ՊԱՐԻԶ. Բոտա, Դէվլետ եւ Դեմարէյ ցերեկ-
վայ 1 ժամին ժամանեցին Հիւսիսային երկա-
թուղու կայարանը եւ ոգեւորված կերպով ող-
ջունվեցին ահագին ամբոխի կողմից:

Վիէննա Բէլգիական հաղորդում են «Nene
Freie Presse» լրագրին, թէ մինիստրների կա-
բինէտը, Նիւում խորհրդակցութիւնից յետոյ,
հրաժարական տուեց,

ԲԱՐՏԵԼՈՒԱ. Սեպտեմբերի 30-ին պաշար-
ման գրութիւնը վերացրած է:

ԽԱՐԿՈՒ. Լեւանդաղնաբերողների համաժո-
ղովի ստուգատիական Բիւրօի հաշուով, ներկայ
տարվայ առաջին կիսամեակում, անցեալ տար-

վայ առաջին կիսամեակի հետ համեմատած,
հանձն է ամուլ 310,000,400 պուլ, 50,000,000
պուլով պակաս, չուրդու—42,500,000 պուլ,
400,000 պուլ պակաս, երկաթ եւ պողպատ—
35,000,000 պուլ, երեք միլիոնով պակաս,
կոկա—58,000,000 պուլ, 5,000,000 պուլ պա-
կաս 18 հարող գործարաններից բանում են 14:
Հանքերում, գործարաններում եւ արդիւնաբե-
րական ուրիշ հիմնարկութիւններում բանու-
ների թիւը պակասեց 20,000-ով: Արդիւնաբեր-
ծութեան կրճատումը անակազմեց շատ ձեռ-
նարկողների:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Правительственный Вѣст-
ник» լրագրում տպված է այն ճառը, որ ար-
տասանել է ժողովրդական լուստաւորութեան
մինիստրութեան կառավարիչ Ջենգէր բարձրա-
գոյն զարդները վերակազմելու համար կազմ-
ված յանձնաժողովի առաջին նիստում: Զառի
մէջ գծադրված են յանձնաժողովի լինութեան
ենթակա ծրագրի հիմնական կէտերը, նրա
նպատակները եւ նրա որոշումների իրագործ-
ման կարգը:

«Русский Инвалид» լրագրը հաղորդում է,
որ զլխաւոր հրամանատար գեներալ-ադիւտանտ
Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ, Պետեր-
բուրգ վերադառնալով, ստանձնեց զորքի հրա-
մանատարութիւնը:

«Нов. Время» լրագրը հաղորդում է. Սե-
նատը բացատրեց, որ զիւղական դատակարգի
մէջ ամուսնու համաձայնութիւնը անցաթուղթ
տալ իր կնոջը անհրաժեշտ է, երբ նա միտանի
է ապրում եւ կերակրում է կնոջը, այլապէս
գէտնալով զլխաւորը կարող է անցաթուղթ
տալ, առանց աղաւթորի համաձայնութեան:
Խիստ վարմունքը կնոջ վերաբերմամբ հիմք է
ծառայում այդպիսի անցաթուղթ տալու հա-
մար: Ներքին գործերի մինիստրութիւնը բա-
ցատրեց, որ Սենատի վճռը տարածվում է
մէջանների դատակարգի կանանց վրա: անցա-
թուղթը տալին են վարչութիւնները նախա-
գաղտնի թղթաւորութիւնը:

ՏԱՐԿՈՒՇԵՏԻ. Ի պատիւ զորքի տուած ճա-
շին Կարլ Թագաւորը կինաց առաջարկեց, որի
մէջ յիշեց 25 տարի առաջ տարած յաղթու-
թիւնները եւ ասեց, որ վերջինները կազմում
են լաւագոյն պարգեւ, սակայն զօրքը չէ կա-
րող բաւականաւայ այդ հետեւանքներով: պա-
հանքներն առում են, եւ օֆիցերները սրանից
յետոյ եւս պէտք է անդադար աշխատեն:

ՊԱՐԻԶ. Բոլորական գեներալներին կայարա-
նում գիմաւորեցին սենատոր Պոլիա եւ պատ-
գամաւորներ ժողովի ու քաղաքային խորհրդի
շատ անդամները Պոլիա մասնաձեւի արեց, որ,
չը նախկինը եղած անցքերին, Ֆրանսիան հաւա-
տում է բոլորական ժողովրդի ապագային: Շնոր-
հակալութիւն յայտնելով արտաշայտված հա-
մակութեան համար, Բոտա ասեց, թէ յոյս
ունի, որ բոլորները շուտով ինքնավարութիւն
կը ստանան: Իրանը վճռել են Անգլիայի հա-
ւատարմի հպատակները մնալ, սակայն այդ բա-
նից այն չը պէտք է հետեւեցնել, թէ բոլորներին
կարելի է վիրաւորել անպատիժ: (Մաքահարու-
թիւններ) Հիւսիսային գնալու ճանապարհի վրա,
գեներալներին ողջունում էին հիւանդանոցի Նը-
րանց տղան 75,000 ֆրանկ Դէվլետ ասեց կայա-
րանում, որ իրանց ցոյց տրված ընդունելութիւնը
վերաբերում է այն բանին, որ բոլորները մի
քանիսների մէջ ֆրանսիական արիւն շատ կայ:
Գեներալները այցեւորներ թողեցին Ելիսեան
պալատում, մինիստրութիւնների մէջ եւ պրէ-
ֆէկտուրայում: Ներքին գործերի մինիստրու-
թեան մէջ նրանց ընդունեցին մինիստր-նախա-
գահը եւ Պոլիա Դէվլետին հետ նրանց կար-
ճառաւ խառակցութիւն ունեցան: Պալատի մօտ
մի երեսասարդ աղաղակեց «կորչին անպիտա-
նեք» եւ անյապաղ ձերբակալվեց:

ՊՈԼՏԱՎԱ. Սեպտեմբերի 29-ին ժամանեց
Մեծ Իշխան Կոստանտին Կոստանտինովիչ:
Կ. ՊՈԼԻՍ. Թիւրքաց զինպետութիւնը ճանա-
պարհ կրկնել Երաւա երեւի հոկտեմբերի 11-ին:
ԼՕՆԴՈՆ. Թիւրքաց զինպետութիւնը յայտա-
արում է, թէ անհիմն են այն լուրերը, որ
իրը թէ Թիւրքերայի եւ Ռուսաստանի միջեւ
բանակցութիւններ են սկսվել ռուսաց զինու-
րական նաւերի համար Դարդանալը բանալու
մասին:

ԲԵԼԴՐԱՒ. Հաստատվում է Վուլիչի մինիստ-
րութեան հրաժարական տուլու լուրը: Հարցի
լուծումը տեղի կունենայ վաղը՝ երբ արքայ-
ական զոյգը կը վերադառնայ Նիշից:
ՊՈԼՏԱՎԱ. Սեպտեմբերի 29-ին ժամանեց
Մեծ Իշխան Կոստանտին Կոստանտինովիչ:
Կ. ՊՈԼԻՍ. Թիւրքաց զինպետութիւնը ճանա-
պարհ կրկնել Երաւա երեւի հոկտեմբերի 11-ին:
ԼՕՆԴՈՆ. Թիւրքաց զինպետութիւնը յայտա-
արում է, թէ անհիմն են այն լուրերը, որ
իրը թէ Թիւրքերայի եւ Ռուսաստանի միջեւ
բանակցութիւններ են սկսվել ռուսաց զինու-
րական նաւերի համար Դարդանալը բանալու
մասին:

ԲԵԼԴՐԱՒ. Հաստատվում է Վուլիչի մինիստ-
րութեան հրաժարական տուլու լուրը: Հարցի
լուծումը տեղի կունենայ վաղը՝ երբ արքայ-
ական զոյգը կը վերադառնայ Նիշից:
ՊՈԼՏԱՎԱ. Սեպտեմբերի 29-ին ժամանեց
Մեծ Իշխան Կոստանտին Կոստանտինովիչ:
Կ. ՊՈԼԻՍ. Թիւրքաց զինպետութիւնը ճանա-
պարհ կրկնել Երաւա երեւի հոկտեմբերի 11-ին:
ԼՕՆԴՈՆ. Թիւրքաց զինպետութիւնը յայտա-
արում է, թէ անհիմն են այն լուրերը, որ
իրը թէ Թիւրքերայի եւ Ռուսաստանի միջեւ
բանակցութիւններ են սկսվել ռուսաց զինու-
րական նաւերի համար Դարդանալը բանալու
մասին:

ԲԵԼԴՐԱՒ. Հաստատվում է Վուլիչի մինիստ-
րութեան հրաժարական տուլու լուրը: Հարցի
լուծումը տեղի կունենայ վաղը՝ երբ արքայ-
ական զոյգը կը վերադառնայ Նիշից:
ՊՈԼՏԱՎԱ. Սեպտեմբերի 29-ին ժամանեց
Մեծ Իշխան Կոստանտին Կոստանտինովիչ:
Կ. ՊՈԼԻՍ. Թիւրքաց զինպետութիւնը ճանա-
պարհ կրկնել Երաւա երեւի հոկտեմբերի 11-ին:
ԼՕՆԴՈՆ. Թիւրքաց զինպետութիւնը յայտա-
արում է, թէ անհիմն են այն լուրերը, որ
իրը թէ Թիւրքերայի եւ Ռուսաստանի միջեւ
բանակցութիւններ են սկսվել ռուսաց զինու-
րական նաւերի համար Դարդանալը բանալու
մասին:

Թիւրքաց զինպետութիւնը ճանապարհ
կրկնել Երաւա երեւի հոկտեմբերի 11-ին:
ԼՕՆԴՈՆ. Թիւրքաց զինպետութիւնը յայտա-
արում է, թէ անհիմն են այն լուրերը, որ
իրը թէ Թիւրքերայի եւ Ռուսաստանի միջեւ
բանակցութիւններ են սկսվել ռուսաց զինու-
րական նաւերի համար Դարդանալը բանալու
մասին:

ՍՕՖԻԱ. «Болгарская» գործակալութիւնը
հաղորդում է, որ մակեդոնական կոմիտէի
չըլաններում հաստատում են, որ իբր թէ
ապստամբները առաջ են լաղում Ստրումա
գետի ձախ ափով եւ գրաւում են արեւելեան
երկաթուղուն սպանող դիրքեր: Միւս կողմից
կոմիտէի նախագահ Ստրաֆով գեկուցում
արեց, որի մէջ ասեց, որ ամբողջ շարժումը
բաղկացած է փոքր աւագակալների նշանա-
կութիւն չունեցող գործողութիւններից:

ՊԱՐԻԶ. Ֆրանսիական ճշգրիտ աղբիւրներից
հաղորդում են, որ բոլորական գեներալներին
այցելութիւնը մինիստր Դէվլետին պաշտոնա-
կան ընտուրութիւն չէր կրում: Ստակցութիւ-
նը Կոմիտէ հետ շարունակվեց մի քանի րօպէ:
Գեներալները նորակալութիւն յայտնեցին Ֆր-
անսիայում ցոյց տրված առատաձեռնութեան
համար պատերազմից վնասվածները դրութիւնը
թեթեւացնելու նպատակով: Զառի ժամանակ
ի պատիւ գեներալների մատուցվեցին արծաթե
ժէտոններ, որոնց մի կողմի վրա կան Կրիզէրի
պատկերը, իսկ միւս կողմի վրա—երկու հան-
րապետութիւնների այլաբանական նկարը: Դէ-
վլետ ասեց, որ երբեք զէնք չի առնի ձեռքը,
որովհետեւ ինքն ստորագրել է խաղաղութեան
դաշնագիրը: Բոտա ասեց, որ միայն հարաւա-
յին աֆրիկացիները կարող են բաւարար կեր-
պով կառավարել հարաւային Աֆրիկան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ի նկատի ունենալով, որ առ-
տասանմանեան մամուլը մոլորութեան մէջ էր
ընկել «Հաւասար գործակալութեան» հետադրով
Երոստաղէմից, սեպտեմբերի 23-ից, «Ռուսաց
Հեռագրական գործակալութիւն» տեղեկու-
թիւն հարցրեց «Ստեփանի Գործակալութիւ-
նից» Հոսում, որը հաղորդեց այժմ բերվող
հեռագիրը «Լոմաբաղական ուխտաւորները,
կարդինալ Ֆերդինանդ առաջնորդութեամբ, ժա-
մանեցին այստեղ իտալական Թարգմանի հետ
եւ դիմաւորվեցին իտալական հիւպատոսի կող-
մից, որը ներկայացրեց կարգապահ քաղաքա-
ցիական եւ զինուորական իշխանութիւնների
ներկայացուցիչներին եւ հիւպատոսական Թարգ-
մաններին: Դիմաւորման ժամանակ երաժշտու-
թիւ

